# «Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

10.12.2025 16:51



2025 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի ունեցավ երիտասարդական խորհրդի կողմից կազմակերպված «Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ինտելեկտուալ խաղը:

Խաղի արդյունքներով հաղթող ճանաչվեց «Խաղից հետո կյանք կա» թիմը հետևյալ կազմով՝

- Վահան Հովհաննիսյան
- Վարդան Գրիգորյան
- Հայկ Հակոբյան
- Լեւոն Սահակյան
- Արտակ Նավասարդյան

Երկրորդ տեղը զբաղեցրեց «Հաղթանակի կանխավարկած» թիմը, իսկ երրորդ տեղում «Ad hoc» թիմն էր:

Հաղթանակը խորհրդանշող «Արծիվ»-ը «Խաղից հետո կյանք կա» թիմի ավագ Վահան Հովհաննիսյանին փոխանցեց նախորդ խաղում հաղթանակ տարած թիմի ավագ Անահիտ-Աննա Մկրտչյանը:

Հաղթական թիմերը ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի կողմից պարգևատրվեցին պատվոգրերով:

«Խաղից հետո կյանք կա» թիմի անդամ Վարդան Գրիգորյանը ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից նվեր ստացավ «Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» գիրքը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })